

«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԿ-ԲՄԱՊՁԲ-20/01

ք. Երևան

«16» 03 2020թ.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ը ի դեմս գլխավոր տնօրենի պարտականույունները կատարող Գ.Ղազարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Իքս-Արթ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Աբովյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **2 օրից ավելի**:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **2 օրից ավելի**,

2.1.8 Ձենել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՞ր՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2:3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **104 800 000 ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարզևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

¹⁷ Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հասկում են:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 (երեք) տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ

¹⁹Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չափերը է պակաս լինի 365 օրացուցային օրից

ծագ տասնորդական) տոկոսի չափով:²⁰ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների ըննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նախապես կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են ըննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

²⁰ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գ Ն Ո Ր Դ

«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Արսլանյան փող. 2. 27
ՀՎՀՀ 01544167

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000600150100

Գ. Ղազարյան



Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Իքս-Արթ» ՍՊԸ
ք. Երևան, Սարյան 4-55
ՀՎՀՀ 01237555

«Ինելկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022246781001

Հ. Արսլանյան



Հավելված N 1
 « 16 » 03 2020 թ. կնքված
 ՀԿ-ԲՄԱՊՁԲ-20/01 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդ- ր քան ակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	48821100	Սերվերային համակարգ	Dell EMC, Veritas, APC, SoricWaii, Netgear	Հավելված 1.1	հատ	104800000	104800000	1	ք.Երևան, Աբովյան 27, 3-րդ հարկ	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրվա ընթացքում

ԳՆՈՐԳ
 «Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ
 ք. Երևան, Աբովյան փող. 2-27
 ՀՎՀՀ 01544167
 «Կոնվերս ըանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1930000600150100

Գ.Ղազարյան

Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Իքս-Արթ» ՍՊԸ
 ք.Երևան, Սարյան 4-55
 ՀՎՀՀ 01237555
 «Ինտելորանկ» ՓԲԸ
 Հ/Հ 2050022246781001

Հ.Աբովյան



ՆԿԱՐԱԳԻՐ
գնվող ապրանքի ամբողջական

Չ/Բ	Տեխնիկական բնութագիրը			քանակ	Մատակարար ման վայրը	Մատակարարման ժամկետը	
1	1. Սերվեր-1 Server-1	Սերվեր (Server)	4 Unit	1	1 հատ	«Հ. Երևան, Արվյան 27, 3-րդ հարկ, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրվա ընթացքում
		Շասսի (Chassis)	Մինչև 24 հատ 2.5" կոշտ սկավառակների շասսի (2.5" Chassis with up to 24 Hard Drives)	1			
		Պրոցեսոր (Processor)	Intel Xeon Platinum 8260 2.4G, 24C/48T, 10.4GT/s, 35.75M Cache, Turbo, HT (165W) DDR4-2933	4			
		Հիշողություն (Memory)	32GB RDIMM, 2933MT/s, Dual Rank	20			
		RAID Տեխնոլոգիա (RAID)	Unconfigured RAID for HDDs or SSDs (Mixed Drive Types Allowed)	1			
		RAID /Ներքին պահեստավորման կարգավորիչներ (RAID/Internal Storage Controllers)	RAID Controller, min 2GB NV Cache, Adapter	1			
		Կոշտ սկավառակ (Hard Drive)	480GB SSD SATA Mix Use 6Gbps 512 2.5in Hot-plug, 3 DWPD, 2628 TBW	2			
		Ներկառուցված համակարգերի կառավարում (Embedded Systems Management)	Սերվերային համակարգի ՎԵԲ կառավարում TCP/IP պրոտոկոլով, սարքավորումների մոնիթորինգ, օպերացիոն համակարգի տեղադրում և կառավարում, օպերացիոն համակարգի հասանելիություն Console -ի միջոցով (Web management over TCP/IP, Hardware monitoring and management, OS installation with drivers, Console access to OS)	1			
		Ցանցային քարտ (Network Card)	Quad Port 10GbE SFP+ Adapter, PCIe with iSOE, TOE, VMQ	1			
		Մնման աղբյուր (Power Supply)	Dual, Hot-plug, Redundant Power Supply (1+1), above 1600W	1			
Էլեկտրասնուցման լարեր (Power Cords)	C13 to C14, PDU Style, 12 AMP, 6.5 Feet (2m) Power Cord	2					

	Դարակաշարային ռելսեր (Rack Rails)	Sliding Rails and Cable Management	1		
	Վիրտուալացման ծրագիր (Virtualization Software)	vSphere Enterprise Plus 1CPU Lic, 1Y Subscription	4		
	Windows Server 2019 standard – առաջարկվող սերվերի հարաչափերին համապատասխան լիցենզիայով	Լիցենզավորումը համապատասխանում և բավարարում է առաջարկվող սերվերի հարաչափերին (կենտրոնական պրոցեսորներ/միջուկ և այլն)	1		
		CAL – 5 հատ			
	Երաշխիք (Warranty)	36 ամիս երաշխիք՝ գործարկման հաջորդ օրվանից սկսած (Next Business Day 36Months)	1		
	<ul style="list-style-type: none"> • DAC հաղորդալարերը համատեղելի են մատակարարվող սարքավորումների հետ: • Նշված սարքավորման համար մրցույթը հաղթողը կներկայացնի արտադրողի կողմից տվյալ սարքավորմանը տրված ավտորիզացիոն ձևը՝ Manufacturer's Authorization Form (MAF): • Սերվերների և պահոցների մատակարարը ունի տեխնիկական սպասարկման առնվազն երկու կենտրոն Հայաստանում, որոնք հավատարմագրված են տվյալ ապրանքանիշի կողմից: 				
2. Սերվեր-2 Server-2	Սերվեր (Server)	4 Unit	1	1 հատ	
	Շասի (Chassis)	Մինչև 24 հատ 2.5" կոշտ սկավառակների շասի (2.5" Chassis with up to 24 Hard Drives)	1		
	Պրոցեսոր (Processor)	Intel Xeon Platinum 8260 2.4G, 24C/48T, 10.4GT/s, 35.75M Cache, Turbo, HT (165W) DDR4-2933	4		
	Հիշողություն (Memory)	32GB RDIMM, 2933MT/s, Dual Rank	20		
	RAID Տեխնոլոգիա (RAID)	Unconfigured RAID for HDDs or SSDs (Mixed Drive Types Allowed)	1		
	RAID /Ներքին պահեստավորման կարգավորիչներ (RAID/Internal Storage Controllers)	RAID Controller, min 2GB NV Cache, Adapter	1		
	Կոշտ սկավառակ (Hard Drive)	480GB SSD SATA Mix Use 6Gbps 512 2.5in Hot-plug, 3 DWPD, 2628 TBW	2		
	Ներկառուցված համակարգերի կառավարում (Embedded Systems Management)	Սերվերայի համակարգի ՎԵՐ կառավարում TCP/IP պոտտոկոլով, սարքավորեանների մոնիթորինգ, օպերացիոն համակարգի տեղադրում և կառավարում: (Web management over TCP/IP, Hardware monitoring and management, OS installation with drivers, Console access to OS)	1		

	Ցանցային քարտ (Network Card)	Quad Port 10GbE SFP+ Adapter, PCIe with iSOE, TOE, VMQ	1		
	Մնման աղբյուր (Power Supply)	Dual, Hot-plug, Redundant Power Supply (1+1), above 1600W	1		
	Էլեկտրասնուցման լարեր (Power Cords)	C13 to C14, PDU Style, 12 AMP, 6.5 Feet (2m) Power Cord	2		
	Դարակաշարային ռելսեր (Rack Rails)	Sliding Rails and Cable Management	1		
	Վիրտուալացման ծրագիր (Virtualization Software)	vSphere Enterprise Plus 1CPU Lic, 1Y Subscription	4		
	Վիրտուալ համակարգերի կառավարման ծրագիր (Virtualization Software and Support)	VMware vCenter Standard License, 1yr Subscription	1		
	Windows Server 2019 standard – առաջարկվող սերվերի հարաչափերին համապատասխան լիցենզիայով	Լիցենզավորումը բավարարում է առաջարկվող սերվերի հարաչափերին (կենտրոնական պրոցեսորներ/միջուկ և այլն) CAL – 5 հատ	1		
	Երաշխիք (Warranty)	36 ամիս երաշխիք գործարկման հաջորդ օրվանից սկսած:	1		
	<ul style="list-style-type: none"> ● DAC հաղորդալարերը համատեղելի են մատակարարվող սարքավորումների հետ: ● Նշված սարքավորումն համար մրցույթը հաղթողը կներկայացնի արտադրողի կողմից տվյալ սարքավորմանը տրված ավտորիզացիոն ձևը՝ Manufacturer's Authorization Form (MAF): ● Սերվերների և պահոցների մատակարարը ունի տեխնիկական սպասարկման առնվազն երկու կենտրոն Հայաստանում, որոնք հավատարմագրված են տվյալ ապրանքանիշի կողմից: 				
3.Backup Exec 20 տվյալների Կրկնօրինակման և վերականգնման ծրագրային	V-Ray Edition - 8 licenses Enterprise Server Option – 1 license			1 հատ	

ապահովում				
4. Տվյալների արխիվային պահոց Backup storage	Պահոց Storage Array	12 HDDs 3.5 inch	1	1 հապ
	Ղեկավարման քարտեր Controller Cards	10Gb iSCSI SFP+ 8 Port Dual Controller	1	
	iSCSI օպտիկա եվ մալուխ iSCSI Optics and Cables	DAC Cable, SFP+, Copper, 3M	8	
	Կոշտ սկավառակ Hard Drives	8TB HDD 7.2K 512e NLSAS 12G 3.5inch	12	
	Պահարանի սայլակ Rack Rails	Rack Rails	1	
	Էլեկտրասնուցման սարք Power Supply	Power Supply, Redundant	1	
	Հաղորդալարեր Power Cords	C13 to C14, PDU-Style, 12 AMP, 2 meter Power Cord	2	
	Սարքավորման սպասարկման ծառայություն Hardware Support Services	Սարքավորման վերանորոգման 3 տարի երաշխիք NBD Onsite 3 Years Hardware Warranty Repair, NBD Onsite	1	
	Պահոցի ֆունկցիոնալություն Storage functional	Պահոցի բաժանում Storage Partitioning		
	<ul style="list-style-type: none"> Նշված սարքավորումն համար մրցույթը հաղթողը կներկայացնի արտադրողի կողմից տվյալ սարքավորմանը տրված ավտորիզացիոն ձևը՝ Manufacturer's Authorization Form (MAF): Սերվերների և պահոցների մատակարարը ունի տեխնիկական սպասարկման առնվազն երկու կենտրոն Հայաստանում, որոնք հավատարմագրված են տվյալ ապրանքանիշի կողմից: DAC հաղորդալարերը համատեղելի են մատակարարվող սարքավորումների հետ: 			
5. Տվյալների ցանցային պահոց SAN storage	Պահոց Storage Array	Dual Controller Active/Active, 2.5 inch, SSD and HDD Mixed drives allowed	1	1 հապ
	Պրոցեսոր Processors	1CPU per controller	2	
	Հիշողություն ըստ կարգավորիչների Memory per Controller	Above 32 GB	2	
	Աձևակցման	Ապահովում է NFS v4		

	պրոտոկոլներ Protocols Supported	Ապահովում է iSCSI			
	RAID Տեխնոլոգիա	Ապահովում է Options 1/0, 5, 6			
	Աջակցվող կոշտ սկավառակներ Supported Drive Types	Ապահովում է SSD, HDD			
	Կարգավորիչների պորտեր Controller ports	10Gb iSCSI SFP+ 4 Port per controller	1		
	Ղեկավարման պորտ Management port	1G BaseT per controller			
	Օպտիկա եվ Optics and Cables	DAC Cable, SFP+, Copper, 3M	8		
	Կոշտ սկավառակ Hard Drives	800GB SSD 3 DWPD	6		
	Կոշտ սկավառակ Hard Drives	1.8TB 10K SAS	19		
	Rack Rails	Rack Rails	1		
	Էլեկտրասնուցման բլոկ Power Supply	Dual Power Supply, Redundant	1		
	Էլեկտրասնուցման մալուխ Power Cords	C13 to C14, PDU-Style, 12 AMP, 2 meter Power Cord	2		
	Սարքավորման սպասրկման ծառայություն Hardware Support Services	Սարքավորման վերանորոգման 3 տարի երաշխիք NBD Onsite 3 Years Hardware Warranty Repair, NBD Onsite	1		
	Պահոցի ֆունկցիոնալություն Storage functional	Compression Deduplication Interface Aggregation Interface Failover FIPS 140-1 support LUN level RAID Storage Partitioning			
	SAS սնուցման եվ SAS	4 lane 12Gb/s SAS ports per controller			

		ելքային պորտեր SAS IO Ports for expansion enclosures							
		<ul style="list-style-type: none"> • Սերվերների և պահուցիների մատակարարը ունի տեխնիկական սպասարկման առնվազն երկու կենտրոն Հայաստանում, որոնք հավաստագրված են տվյալ ասրանքանիշի կողմից: • Նշված սարքավորման համար մրցույթը հաղթողը կներկայացնի արտադրողի կողմից տվյալ սարքավորմանը տրված ավտորիզացիոն ձևը՝ Manufacturer's Authorization Form (MAF): • DAC հաղորդալարերը համատեղելի են լինեն մատակարարվող սարքավորումների հետ: 							
6.Սերվերային պահարան Rack	Կառուցվածք Form factor						1 հարկ		
	Բարձրություն Height	42U							
	Լայնություն Width	19"							
	Չափեր Physical Dimensions								
	Առավելագույն Լայնություն Max Width	600mm							
	Առավելագույն խորություն Max Depth	1070mm							
	Առավելագույն տեղադրման խորություն Maximum Mounting Depth	915mm							
	Նվազագույն տեղադրման խորություն Minimum Mounting Depth	191mm							
	Դռներ և վահանակներ Doors and panels								
	Դիմաց Front	Պերֆորացված, փականով Perforated, With key lock							
	Ետնամասի Rear	Պերֆորացված, փականով Perforated, With key lock							
	Դարակներ Slide	Հարթ, փականով Smooth, With key lock							
	Բեռնվածությունը ըստ քաշի								

	Weight load			
	Ստատիկ Static	1704,55 կգ 1704,55 kg		
	Դինամիկ Dynamic	1022,73 կգ 1022.73kg		
	<ul style="list-style-type: none"> Նշված սարքավորման համար մրցույթը հաղթողը կներկայացնի արտադրողի կողմից տվյալ սարքավորմանը տրված ավտորիզացիոն ձևը՝ Manufacturer's Authorization Form (MAF): 			
7. Անխափան սնուցման սարք UPS	Կառուցվածք Form factor	3U Rack mountable/Tower convertible	1 հար	
	Մակարդակ Level	On-Line, Smart		
	Տեխնոլոգիա Technology	Double Conversion		
	Առավելագույն հզորություն Max Power	4.8kW		
	Առավելագույն բեռնվածություն Max Load	5.0kVA		
	Լարման շեղում Voltage Distortion	<2%		
	Կորի գործոն Crest Factor	3:1		
	Հոսանքի ֆունկցիանալություն Power functions	Հաճախականության և լարման կարգավորում, Frequency and Voltage Regulation,		
		Էլեկտրական հովացուցիչներ, Power Conditioning,		
		Մուտքային հզորության գործակցի կարգավորում, Input Power Factor Correction,		
	Մուտք Input connection	NEMA L6-30P		
	Մուտքային լարում Input voltage range	Standard 160 to 275 VAC Adjustable 100-275 VAC		
	Մուտքային հաճախականություն Input Frequency	50/60 Hz \pm 10 Hz (Auto Sensing)		
Մուտքային համատեղելիություն Input Compatibility	Գեներատորի հետ համատեղելի Generator Compatible			
Ելք	2 x NEMA L6-20R			

	Output connection	2 x NEMA L6-30R		
	Ելքային լարում Output voltage range	208 to 240 VAC		
	Ելքային հաճախականություն Output Frequency	50/60 Hz ± 3 Hz		
	Ապահովություն Protection	Resettable Circuit Breaker		
	Բայպաս Bypass	Automatic Internal, manual		
	Մարտկոցներ Batteries	Hot-Swappable,		
	Մարտկոցների աշխատանքային ռեսուրս (տարի) Expected Battery Life (years)	3-5		
	Կառավարում Management	Network manageable, RJ45 connectivity Local manageable, Serial connectivity		
	Ինդիկատորներ Indicators	LCD Graphics Display, LED Status Indicators		
	Ծանուցումներ եվ ահազանգեր Notifications/Alerts	Battery Failure Notification, Disconnected Battery Notification		
	<ul style="list-style-type: none"> Նշված սարքավորման համար մրցույթը հաղթողը կներկայացնի արտադրողի կողմից տվյալ սարքավորմանը տրված ավտորիզացիոն ձևը՝ Manufacturer's Authorization Form (MAF): 			
8. Հաջորդ սերնդի հրապատ (Firewall) Next Generation Firewall NGF	Ցանցային անվտանգության սարք Next Generation Firewall General Specifications.		2 հարկ	
	Կառուցվածք (Form factor)	1U Rack mountable		
	Միացումներ Connectivity			
	1GbE RJ45	16		
	1GbE SFP	4		
	10GbE SFP+	2		
	Management port RJ45	1		
	Console port RJ45	1		
Ղեկավարում Management	CLI, SSH, Web UI , Capture Security Center, GMS, REST APIs			

Logging	Remote logging, log analyzing
Ցանց Networking	
VLAN	400
Authentication	LDAP (multiple domains), XAUTH/RADIUS, internal user database
NAT modes	1:1, many:1, 1:many, flexible NAT overlapping, PAT
Routing protocols	BGP, OSPF, RIPv1/v2, static routes, policy-based routing
HA modes	Active/Passive
Միջանցային պաշտպանիչ էկրան / VPN արտադրողականություն Firewall/VPN Performance	
Firewall inspection throughput	6.0Gbps
IPS throughput	2.3Gbps
Anti-malware inspection throughput	2.45Gbps
SSL/TLS inspection throughput	675Mbps
VPN throughput	3.0Gbps
Connections per second	40,000
Maximum connections (DPI)	1000K
VPN	
Site-to-site tunnels	4,000
IPSec VPN clients (max)	2,000
Encryption/Authentication	DES, 3DES, AES (128, 192, 256-bit)/MD5, SHA-1, Suite B Cryptography
Key exchange	Diffie Hellman Groups 2, 5, 14
Route-based VPN	RIP, OSPF, BGP
Անվտանգության մոդուլներ / Ֆունկցիոնալություն Security modules / Functionality	IPS, Gateway Anti-malware, Bot-net protection, Վեբ կայքի պարունակության ֆիլտրում, URL վարկանիշ, URL զտիչ, SSL ստուգում, Դիմումների վերահսկում, թրաֆիկի ձևավորում, Stateful firewalling IPS, Gateway Anti-malware, Bot-net protection, Web Site Content Filtering, URL rating, URL filtering, SSL Inspection, Application control, Traffic Shaping, Stateful firewalling
Գրանցումներ և աջակցություն Subscriptions and support	Առնվազն 1 տարի յուրաքանչյուր մոդուլի կամ փաթեթի համար, որն իր մեջ ներառում է սարքերի աջակցություն, 0< և ստորագրություններ պարբերական թարմացումներ անվտանգության ծառայությունների համար Min 1 year for each module or bundled, which includes device support, OS and signatures periodic updates for security services

	<ul style="list-style-type: none"> • DAC հաղորդալարերը համատեղելի են մատակարարվող սարքավորումների հետ: • Նշված սարքավորման համար մրցույթը հաղթողը կներկայացնի արտադրողի կողմից տվյալ սարքավորմանը տրված ավտորիզացիոն ձևը՝ Manufacturer's Authorization Form (MAF): • Սարքը կապահովվի high-availability ակտիվ/պասիվ սարքավորումներով և կաշխատի համպատասխան լիցենզիայով միայն ակտիվ սարքավորման համար: 																																																						
9. Ֆանցային կոմուտատոր Switch	<table border="1"> <tr> <td>Կառուցվածք Form factor</td> <td>1U Rack mountable</td> </tr> <tr> <td>Էլեկտրասնուցման բլոկ Power Supply</td> <td>Single included, Optional redundant</td> </tr> <tr> <td>Մակարդակը Level</td> <td>Stackable, L3 Managed Switch</td> </tr> <tr> <td>Պորտերի միացումներ Connectivity</td> <td></td> </tr> <tr> <td>1GbE RJ45</td> <td>24</td> </tr> <tr> <td>10GbE SFP+</td> <td>24</td> </tr> <tr> <td>Management port RJ45</td> <td>1</td> </tr> <tr> <td>Console port RJ45</td> <td>1</td> </tr> <tr> <td>USB port</td> <td>1</td> </tr> <tr> <td>Կառավարում Management</td> <td>Out-of-band, Web GUI, HTTPs, CLI, Telnet, SSH</td> </tr> <tr> <td>Ցանց Networking</td> <td></td> </tr> <tr> <td>Spanning tree</td> <td>STP, MTP, RSTP</td> </tr> <tr> <td>VLANs</td> <td>Static, Dynamic, MAC based, multi VLAN, Private VLANs, GVRP/GMRP</td> </tr> <tr> <td>Aggregation</td> <td>Static or Dynamic LACP, L2/L3/L4 hashing algorithms</td> </tr> <tr> <td>Static routing</td> <td>Port, Subnet, VLAN routing, DHCP Relay</td> </tr> <tr> <td>Dynamic routing</td> <td>IPv4: RIP, VRRP, IPv4/IPv6: OSPF, Proxy ARP</td> </tr> <tr> <td>Արտադրողականություն Performance</td> <td></td> </tr> <tr> <td>Switching Capacity</td> <td>960Gbps</td> </tr> <tr> <td>Throughput</td> <td>714Mpps</td> </tr> <tr> <td>MAC table</td> <td>128K</td> </tr> <tr> <td>ARP tables</td> <td>8K</td> </tr> <tr> <td>Buffer</td> <td>56MB</td> </tr> <tr> <td>VLANs</td> <td>4K</td> </tr> <tr> <td>Multicast Forwarding Entries</td> <td>1,024 IPv4</td> </tr> <tr> <td>DHCP</td> <td>2K leases</td> </tr> </table>	Կառուցվածք Form factor	1U Rack mountable	Էլեկտրասնուցման բլոկ Power Supply	Single included, Optional redundant	Մակարդակը Level	Stackable, L3 Managed Switch	Պորտերի միացումներ Connectivity		1GbE RJ45	24	10GbE SFP+	24	Management port RJ45	1	Console port RJ45	1	USB port	1	Կառավարում Management	Out-of-band, Web GUI, HTTPs, CLI, Telnet, SSH	Ցանց Networking		Spanning tree	STP, MTP, RSTP	VLANs	Static, Dynamic, MAC based, multi VLAN, Private VLANs, GVRP/GMRP	Aggregation	Static or Dynamic LACP, L2/L3/L4 hashing algorithms	Static routing	Port, Subnet, VLAN routing, DHCP Relay	Dynamic routing	IPv4: RIP, VRRP, IPv4/IPv6: OSPF, Proxy ARP	Արտադրողականություն Performance		Switching Capacity	960Gbps	Throughput	714Mpps	MAC table	128K	ARP tables	8K	Buffer	56MB	VLANs	4K	Multicast Forwarding Entries	1,024 IPv4	DHCP	2K leases	2 հար			
Կառուցվածք Form factor	1U Rack mountable																																																						
Էլեկտրասնուցման բլոկ Power Supply	Single included, Optional redundant																																																						
Մակարդակը Level	Stackable, L3 Managed Switch																																																						
Պորտերի միացումներ Connectivity																																																							
1GbE RJ45	24																																																						
10GbE SFP+	24																																																						
Management port RJ45	1																																																						
Console port RJ45	1																																																						
USB port	1																																																						
Կառավարում Management	Out-of-band, Web GUI, HTTPs, CLI, Telnet, SSH																																																						
Ցանց Networking																																																							
Spanning tree	STP, MTP, RSTP																																																						
VLANs	Static, Dynamic, MAC based, multi VLAN, Private VLANs, GVRP/GMRP																																																						
Aggregation	Static or Dynamic LACP, L2/L3/L4 hashing algorithms																																																						
Static routing	Port, Subnet, VLAN routing, DHCP Relay																																																						
Dynamic routing	IPv4: RIP, VRRP, IPv4/IPv6: OSPF, Proxy ARP																																																						
Արտադրողականություն Performance																																																							
Switching Capacity	960Gbps																																																						
Throughput	714Mpps																																																						
MAC table	128K																																																						
ARP tables	8K																																																						
Buffer	56MB																																																						
VLANs	4K																																																						
Multicast Forwarding Entries	1,024 IPv4																																																						
DHCP	2K leases																																																						

	Վիրտուալացման օպտիմիզացիա Virtualization optimizations	iSCSI Acceleration		
	Անվտանգություն Security	DHCP Snooping, IP Source Guard protection, DoS attacks mitigation		
		Աուտենտիֆիկացիա Authentication	DOT1X	
	<ul style="list-style-type: none"> • DAC հաղորդալարերը համատեղելի են մատակարարվող սարքավորումների հետ: • Նշված սարքավորման համար մրցույթը հաղթողը կներկայացնի արտադրողի կողմից տվյալ սարքավորմանը տրված ավտորիզացիոն ձևը՝ Manufacturer's Authorization Form (MAF): 			
10. Էլեկտրասնուցման բաշխիչ PDU	Էլեկտրասնուցման բաշխիչ սարք PDU		2 հար	
	Կառուցվածք Form Factor	0 U		
	Մուտք Input Connector	NEMA L6-30R		
	Ելք Output connectors	10 x C13 2 x C19		

* Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պետք է ներկայացնի նաև առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվություն:

Գ Ն Ո Ր Դ

«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ
 ք. Երևան, Արուսյան պող. 27
 ՀՎՀՀ 01544167
 «Կոնվերս ըսանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1930000600150100



Գ. Ղազարյան

4.5

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Իքս-Արթ» ՍՊԸ
 ք. Երևան, Սարյան 4-55
 ՀՎՀՀ 01237555
 «Ինեկոբանկ» ՓԲԸ
 Հ/Հ 2050022246781001



Հ. Արուսյան

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Որամ»

		Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	48821100	Սերվերային համակարգ					104 800 000	104 800 000	104 800 000	104 800 000	104 800 000	104 800 000	104 800 000	104 800 000	104 800 000	104 800 000

Գ Ն Ո Ր Դ


«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ
 ք. Երևան, Արուսյան փող. 2/27
 ՀՎՀՀ 01544167
 «Կոնվերս բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1930000600150100



Գ. Ղազարյան

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Իքս-Արթ» ՍՊԸ
 ք. Երևան, Սարյան 4-55
 ՀՎՀՀ 01237555
 «Ինեսկոբանկ» ՓԲԸ
 Հ/Հ 2050022246781001



Հ. Արուսյան